ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶԱՑԻԱ VS ԱՌՑԱՆՑ ՍՈՑԻԱԼԻԶԱՑԻԱ. ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ*

Հասմիկ Շափաղաթյան

Բանալի բառեր՝ սոցիալիզացիա, առցանց սոցիալիզացիա, դեմ առ դեմ սոցիալիզացիա, հաղորդակցական տեխնոլոգիա, վիզուալ մշակույթ, ինովացիոն համակարգ, հիբրիդային մոդել, սոցիալիզացիայի աշխարհագրական տարածք, առցանց ավազակ:

Մարդկության պատմության մեջ 21-րդ դարն աչքի է ընկնում թռիչքաձև և արտասովոր նորամուծությունների աննախադեպ քանակով և որակով: Մենք դեռևս բոլորել ենք այս դարի 2-րդ տասնամյակը, բայց արդեն ականատեսն ենք բազմաթիվ հայտնագործությունների, որոնք կտրուկ փոխել են մեր ապրելակերպը. Bluetooth տեխնոլոգիաները, լայնամասշտաբ ինտերնետը, արհեստական սիրտը, գենետիկական ինժեներիան, վիրտուալ իրականությունը, 4D տպագրությունը և այլ ինովացիաներ: Այս գյուտերից յուրաքանչյուրը վերաձևակերպում է մեր ապրելակերպը և վերաիմաստավորում է մարդ-մարդ, մարդ-պետություն բազմաբնույթ շփման ուղիները: Թեև այս ձեռքբերումներից որոշները գտնվում են զարգացման դեռևս վաղ փուլում, այնուամենայնիվ, նրանք ունեն բարդ ու հեռանկարային ապագա:

Արդի աշխարհում մարդու սոցիալիզացիան ընթանում է կենսատարածքի թվայնացման պայմաններում: Ժամանակակից տեղեկատվական աշխարհում անձի սոցիալական զարգացման համատեքստում կիրառվում են ամենատարբեր տերմիններ, որոնցից են՝ կիբեռսոցիալիզացիա, թվային սոցիալիզացիա, տեղեկատվական սոցիալիզացիա և այլն: Անզեն աչքով անգամ ակներև է, թե որքան բազմաբնույթ փոփոխությունների են ենթարկվել մարդկանց սոցիալական փոխազդեցությունները՝ սկսած առցանց հաղորդակցության տարատեսակ ներդրումներից, որոնք իրենց հերթին վերաստահմանել են նոր հայեցակարգեր:

Հաշվի առնելով արդի ժամանակների պահանջները՝ մեծ հաշվով կարելի է առանձնացնել սոցիալիզացիայի դրսևորման երկու ձև:

Առաջինը սոցիալիզացիայի ավանդական ձևն է, որն իրենից ներկայացնում է սերունդների կողմից գիտելիքների, համոզմունքների, նորմերի և դրույթների ձեռքբերման գործընթաց, որը ձևավորվում է կոնկրետ հասարակությունում՝ նրան վերապահելով դրա պահպանման և զարգացման գործառույթը: Հարկ է նշել, որ սոցիալիզացիա տերմինն առաջին անգամ գիտական գործածության մեջ է մտցրել Ֆրանկլին Գիդդինգսը՝ անցյալ դարի 50-ականներին: Ըստ նրա՝ սոցիալիզացիան մարդու սոցիալական բնության զարգացման գործընթաց է, այլ կերպ՝ մարդկանց սոցիումում գտնվելու և դրա բաղկացուցիչը դառնալու բնական ձգտում:

Սոցիալիզացիայի ավանդական մոդելի շրջանակներում ծնունդ են առել տարբեր տեսություններ, որոնցից ամեն մեկը յուրովի է բացատրում անձի սոցիալական բնության զարգացման գործընթացը:

---

* Հոդվածն ընդունվել է 23.10.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը: 29.10.21:

Այսպես, Զ.Ֆրեյդի կողմից առաջարկված տեսության շրջանակներում սոցիալիզացիան դիտարկվում է որպես ինքնակառավարման գործընթացի զարգացում: Այս կոնցեպտի հիմքում ընկած է այն դրույթը, որ անհատը միշտ կոնֆլիկտի մեջ է հասարակության հետ, որն էլ ռեպրեսիայի է ենթարկում նրա բնածին կենսաբանական ցանկությունները: Այս պարագայում սոցիալիզացիոն գործընթացի խնդիրն է սանձահարել այդ կործանիչ բնազդներն ու ցանկությունները, որը բախվում է հասարակական հսկողությանը: Որպես հետևանք՝ առաջ է գալիս անհատի ինքնակառավարման անհրաժեշտությունը:

Կուլիի և Միդի սիմվոլիկ ինտերակցիոնիզմի տեսության շրջանակներում սոցիալիզացիան դիտարկվում է իբրև անհատների փոխադարձ շփումների արդյունք, այսինքն՝ անհատը ձևավորում է իր սեփական եսը՝ շրջակա միջավայրի մարդկանց հետ փոխգործակցությունների արդյունքում: Դրանց ընթացքում մարդիկ արձագանքում են այն արժեքներին, որոնք իրենց համար ինչ-որ նշանակություն ունեն: Այս մոտեցման կողմնակիցներն իրենց ուշադրությունը բևեռել են անհատի վրա խմբակային ազդեցության արդյունավետության վրա՝ փաստելով, որ անհատի հարմարվողականությունը գոյություն ունեցող սոցիալական համակարգին արդեն իսկ մեծ նվաճում է:

Ավանդական սոցիալիզացիոն մոդելի շրջանակներում հետաքրքրական է դիտարկել Թ.Պարսոնսի կառուցվածքային ֆունկցիոնալիզմի տեսությունը: Ըստ այդ տեսության՝ անհատը համագործակցում է այլ մարդկանց հետ՝ շնորհիվ այն դերերի, որոնք նա յուրացնում է /ուսուցիչ, ծնող, աշակերտ, ամուսին և այլն/: Իսկ հասարակական դերը ենթադրում է անհատից սպասվելիք վարքը դերային բաշխման համապատասխան: Հետևաբար, սոցիալիզացիան այս տեսության շրջանակներում նշանակում է անհատի ներգրավումը հասարակական համակարգ՝ դերերի ընկալման և յուրացման միջոցով: Այլ կերպ, սոցիալիզացիան մի գործընթաց է, երբ անհատը ստիպված է մշտապես հարմարվել հասարակության մեջ տիրող արժեքներին և վարքի ստանդարտներին:

Անհատ-անհատ, անհատ-իշխանություն փոխհարաբերությունների մյուս կոնցեպցիան մշակել են Ա.Սմիթը, Հ.Սպենսերը և այլք: Նրանք մարդուն դիտում են որպես բանական էակ, ում համար գործողությունների հիմնական շարժիչ ուժը շահն է: Սեփական շահն իրագործելու ձգտումն անհատին ստիպում է գիտակցել իր ջանքերի միաձուլման կարևորությունը՝ անձնական պահանջները բավարարելու համար: Համապատասխանաբար, պետություն հասկացությունը մեկնաբանվում է որպես հասարակական անհրաժեշտ ինստիտուտ, որն ընդունում է անհատական շահերի համագործակցության առավելությունները և դրանց իրագործման ժամանակ ապահովում է կարգ ու կանոն:

Անհատի դեմ առ դեմ կամ ավանդական սոցիալիզացիան խոր անձնական կապ է ապահովում իրական աշխարհի հետ: Դա բացատրվում է նրանով, որ ողջ կյանքի ընթացքում մարդն ունենում է տարատեսակ փոխհարաբերություններ իր ընտանիքների, ընկերների և շրջապատի մարդկանց հետ: Ինֆորմացիան, որը ձեռք է բերվում այդ փոխազդեցություններից, տալիս է անհրաժեշտ գիտելիքներ մանկությունից պատանեկություն և հասունությանն անցնելու համար: Օրինակ, երբ մարդը սխալներ է թույլ տալիս, նա ուզում է իմանալ, թե որն է իր սխալը և ինչպիսին են ուրիշների արձագանքներն իր այդ քայլին: Ստացված արձագանքները, իհարկե, չեն սահմանափակվում միայն խոսքով, դրանք ներառում են նաև մարմնի լեզուն, դեմքի արտահայտությունները ու գործողությունները: Նա ոչ միայն սովորում է, թե ինչն է սխալ, այլև սովորում է, թե ինչպես շտկել դրանք՝ ուշադրություն դարձնելով ուրիշների կատարած ուղղումներին: Սա դաստիարակության գործընթացը դարձնում է արագ և հեշտ, իսկ գործընթացի անընդհատ կրկնությունն օգնում է անհատին՝ սահուն անցնել մարդկային զարգացման փուլերով[1]:

Սոցիալիզացիայի ավանդական մոդելի շրջանակներում բավական շատ են տարատեսակ տեսությունները: Բավարարվելով վերը շարադրվածով, փաստենք, որ այդ բոլոր տեսությունների ելակետը մարդկանց միջև անմիջական շփումներն են և դեմ առ դեմ համագործակցությունները:

Սոցիալիզացիայի համեմատաբար նոր ձևն առցանց հաղորդակցությունն է, այլ կերպ՝ առցանց զրույցները, տեքստային հաղորդագրությունների փոխանակումը, էլեկտրոնային փոստով հաղորդակցումը, առցանց խաղերը կամ այլ վիրտուալ շփումները:

Առցանց կամ օնլայն սոցիալիզացիան կախված է վիրտուալ աշխարհից, ինչը ներկայացնում է իրական աշխարհը՝ թվային ձևաչափով: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ հնարավոր չէ հասարակության գործունեության բոլոր ոլորտները ներկայացնել թվային տեսքով: Հասարակության գործունեությունը լի է զգացմունքներով, հույզերով և գործողություններով, որոնք հնարավոր չէ արտահայտել բանավոր կամ գրավոր տեսքով: Թվային աշխարհը սահմանափակվում է ԶԼՄ-ների կողմից գրանցված տեղեկատվությամբ, որն էլ դժվարացնում է առցանց սոցիալիզացիա ապահովելու համար իրական աշխարհում գոյություն ունեցող բոլոր սոցիալական փոխազդեցությունները[2]: Այսպես, զգացողությունները, որոնք առաջանում են ընկերոջ հետ շփվելիս, չեն կարող ամբողջությամբ փոխարինվել տեքստային հաղորդագրությունների կամ առցանց զրույցների միջոցով: Այս տեխնոլոգիաները փոխանցում են բառերը, բայց ոչ զգացմունքները և հույզերը, որոնք հեշտությամբ արտահայտվում են մարմնի լեզվի և դիմախաղերի օգնությամբ: Արդյունքում՝ փոխանցված հաղորդագրությունը լինում է թերի:

Ի հավելումը դրա, առցանց սոցիալիզացիան բացասական ազդեցություն ունի երեխաների հասունության գործընթացի վրա, ովքեր ամբողջովին կախված են առցանց հաղորդակցությունից: Դա բացատրվում է նրանով, որ իրենց առցանց հաղորդակցության ընթացքում երբեմն-երբեմն օգտագործում են ոչ պատշաճ բառեր և իրականացնում են ոչ կոռեկտ գործողություններ, որոնք գտնվում են վերահսկողությունից դուրս: Այդ երեխաները, որոնք երբեմն գործում են հասարակության կողմից ընդունված նորմերի շրջանակներից դուրս և չունեն գիտելիքների անհրաժեշտ բազա, չեն կարող անցնել հասունացման բնական գործընթացով[3]:

Այսօր ավելի քան 160 երկրներում միլիոնավոր մարդիկ համարվում են համացանցի <<անդամներ>>: Իհարկե, սա ստատիկ լինել չի կարող, որովհետև այն աճում է ամեն ամիս ու տարի, ամեն օր ու ժամ: Ընդ որում, տարբեր ուսումնասիրություններն այս ոլորտում ցույց են տալիս, որ դրանց թիվն աճում է ոչ միայն քանակապես, այլ ժամանակային կոնտեքստում, համացանցում անցկացրած ժամանակի քանակով և այլն: Այս աճող տեմպերը հանգեցրեցին մի նոր երևույթի ծնունդին՝ այն է՝ կիբեռսոցիալիզացիային:

***Կիբեռսոցիալիզացիան**՝ վիրտուալ համակարգչային սոցիալիզացիան, անձի հատկությունների որակական փոփոխությունների լոկալ գործընթաց է, որը տեղի է ունենում կիբեռտարածության մեջ համացանցային ռեսուրսների և հաղորդակցության օգտագործման արդյունքում՝ գլոբալ ինտերնետ միջավայրում շփվելով վիրտուալ ագենտների հետ, օր.՝ սոցիալական ցանցեր, մեսսենջեռներ, որոնողական համակարգեր և այլն[4]:*

Մի կողմից, կիբեռսոցիալականացումը շատ դեպքերում հեշտացրել է մարդկային շփումները, դաստիարակության և կրթության պրոցեսները, մյուս կողմից՝ ժամանակակից երիտասարդությունը գործնականում «կորցրել է» վերլուծական և ինֆորմացիայի մշակման հմտությունները՝ ամեն նոր ինֆորմացիա ընդունելով իբրև ճշմարտություն: Արդյունքում՝ կրթությունը դարձել է ինտերնետում որոնողական ակտիվություն, ինչն, իհարկե, ենթադրում է մտածողության և հիշողության պարզեցում:

Անհերքելի է այլևս, որ կիբեռսոցիալիզացիայի պրոցեսում փոխվում է մարդու կյանքը, ի հայտ են գալիս նոր սովորույթներ, նոր գործունեություն, նոր մոտիվացիաներ, փոխվում են նաև մարդու սոցիալ-հոգեբանական բնութագրերը, որոնք էլ նրան ուղղորդում են դեպի վիրտուալ տարածություն: Այս ամենն ազդում է մարդու դաստիարակության և կրթության վրա: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ երիտասարդությունը համարվում է բազմաթիվ սոցիալական ինստիտուտների անդամ /ընտանիք, դպրոց, համալսարան, աշխատանք, տարբեր ոլորտային կազմակերպություններ/, ինչպես նաև՝ կրթության և ուսուցման հիմնական օբյեկտ, ով այսօր առանց ինտերնետի պարզապես չի գործառնում, ապա պարզ է դառնում երիտասարդությանը՝ որպես կիբեռսոցիալականացման առանցք դիտարկելու անհրաժեշտությունը: Այլ կերպ, կարևոր է անդրադառնալ, թե ինչպես է դրանց շրջանակներում ընթանում երիտասարդության ուսուցման և կրթության գործընթացը:

«Առցանց» ուսուցում VS «Դեմ առ դեմ» ուսուցում

Թե՛ առցանց և թե՛ դեմ առ դեմ ուսուցումը ստեղծվել են տարբեր նպատակներով և գործում են տարբեր կերպ:

Դեմ առ դեմ կամ ավանդական ուսուցումը գալիս է դարերի խորքից: Ավանդական ուսուցման ընթացքում դասախոսները և ուսանողները ֆիզիկապես հանդիպում են դասասենյակում սահմանված ժամանակահատվածով: Սա գաղափարների, կարծիքների փոխանցման համար ստեղծում է բարենպաստ պայմաններ: Դեմ առ դեմ ուսուցումն ուսանողներին հնարավորություն է տալիս անել մեկնաբանություններ, տալ հարցեր, շփվել ուրիշների հետ բանավոր քննարկումների ընթացքում, իսկ դասախոսներն ապահովում են հետադարձ կապ բանավոր, գրավոր, կամ մարմնի լեզվի տեսքով[5]: Բացի այդ, ավանդական ուսուցումն ավելի շատ է ընդունվում որպես «իրական» ուսուցման ձև, հետևաբար, եթե դուք ինչ-որ մեկին ասում եք, «ես պատրաստվում եմ այս կամ այն դասընթացի գնալ», մարդիկ ավանդաբար հասկանում են, որ դուք ժամանակ եք տրամադրում դրան և լուրջ եք վերաբերվում այդ հարցին: Դպրոցը, միջին մասնագիտական հաստատությունները, համալսարանն ունեն բավական մեծ ազդեցություն մարդու ձևավորման վրա՝ որպես սոցիալական օբյեկտի:

Կիբեռտարածության մեջ կրթությունը հնարավորություն ունի զուգակցելու տեսությունն ու պրակտիկան «այստեղ և հիմա»: Բացի դրանից, թվային տեխնոլոգիաները երիտասարդին տալիս են լայն հնարավորություններ՝ ստեղծելու կրեատիվ ինովացիոն կոնտենտներ, ինչպես նաև՝ իրականացնելու ստեղծագործական ծրագրեր տարբեր ռեսուրսներով / You Tube com, Flickr.com և այլն/: Անկասկած է, որ երիտասարդությունն ավելի, քան որևէ այլ տարիքային խումբ, ամբողջությամբ ներգրավված է մեդիասեկտորում և լավագույնս տիրապետում է կիբեռտարածության մեջ պահանջվող հնարքներին և կարողություններին: Հետազոտողներն այն կարծիքին են, որ ստեղծագործական համագործակցությունը կիբեռտարածքում երիտասարդներին օժտում է մի շարք առավելություններով՝ մեդիագրագիտություն և տեխնիկական հմտություններ, թույլ է տալիս ստեղծել գեղարվեստական նոր կերպարներ և ժանրեր, ամրապնդում է անհատականության այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են՝ էթնիկական պատկանելությունը կամ մշակութային ծագումը: Անմիջական շփումների հետ մեկտեղ, երիտասարդությունն ինտերնետում ձևավորում է իր սկզբունքները, մոտիվացիան, ինչպես նաև որոնում և իրենն է դարձնում այն անհրաժեշտ ինֆորմացիան, որն իրեն պետք է կրթության մեջ:

Ավանդական ուսուցման դեպքում գոյություն ունի կոնկրետ հաստատված ժամանակահատված, որի ընթացքում անցկացվում են դասընթացները, և շատ դեպքերում ուսանողների անձնական գրաֆիկի ծանրաբեռնվածությունը, առողջական խնդիրները և այլ հանգամանքները ֆիզիկապես թույլ չեն տալիս ներկա գտնվել դասերին: Այս խնդիրը հեշտությամբ հարթվում է առցանց ուսուցման շրջանակներում, քանի որ պար-

տադիր չէ գտնվել դասասենյակում՝ դասընթացին մասնակցելու և ինֆորմացիան ստանալու համար: Այս դեպքում դասախոսը գրավոր տեսքով տրամադրում է անհրաժեշտ հրահանգները, և ուսանողներն իրականացնում են այն, ինչն ակնկալվում է: Գրառումները կամ ձայնային հաղորդագրությունները հաղորդակցման հիմնական ձևերն են, և եթե ուսանողները հարցի վերաբերյալ պարզաբանումներ են ցանկանում, նրանք պետք է գրեն իրենց հարցերը և սպասեն ժամեր, երբեմն նույնիսկ օրեր՝ պատասխան ստանալու համար, իսկ եթե այն պարզ չէ, նրանք կրկին պետք է կրկնեն գործընթացը: Նմանատիպ իրավիճակներից խուսափելու համար ուսանողները նախընտրում են ավելի շատ գրքեր ուսումնասիրել և տվորել ինքնուրույն:

Այնուամենայնիվ, առցանց ուսուցումն ավելի շատ համապատասխանում է աշխատող ուսանողներին, ովքեր ժամանակ չունեն ավանդական դասընթացներին հաճախելու և պարտավորված են միաժամանակ հավասարակշռելու կրթությունն աշխատանքի, ընտանիքի և այլ ոլորտների հետ: 2016 թ-ի հետազոտությունները ցույց են տվել, որ բակալավրիատն ավարտող առցանց ուսանողները միջինում 29 տարեկան են, իսկ մագիստրատուրայի առցանց շրջանավարտները միջինում 33 տարեկան են, որն արտացոլում է առցանց ուսումնական ծրագրերի ժողովրդականությունը և արդյունավետությունը՝ չափահասներին հնարավորություն տալով հասնելու իրենց նպատակներին կրթության և կարիերայի ոլորտում[6]:

Բացի վերը նշված պատճառներից, առցանց դասընթացները լավ տարբերակներ են ֆիզիկական հաշմանդամություն ունեցող աշակերտների և այն ուսանողների համար, ովքեր տարբեր պատճառներով իրենց կաշկանդված են զգում դեմ առ դեմ փոխազդեցություններից: Սկսենք նրանից, որ ուսանողները ստիպված չեն բախվելու ճանապարհորդության և տրանսպորտային խնդիրներին, քանի որ օնլայն դասերն ապահովում են սեփական տան հարմարավետությունները[7]:

Ավանդական և առցանց ուսուցման շրջանակներում պակաս կարևոր դեր չի խաղում անհատի կամ նրա ընտանիքի ֆինանսական դրությունը: Անշուշտ, պետությունն ապահովում է երիտասարդների կրթությունն ընդհանուր հանրակրթական հաստատություններում, սակայն այն ավարտելուց հետո շատ շրջանավարտներ չեն կարողանում շարունակել ուսումը մասնավոր քոլեջներում, համալսարաններում, քանի որ չեն կարող իրենց նման շռայլություն թույլ տալ: Իհարկե, այսօր արդեն գոյություն ունեն տարբեր մեխանիզմներ, որոնց կիրառման արդյունքում նման խնդիրը լուծվում է ի նպաստ շրջանավարտների: Նրանք կարող են դիմել մի շարք բարեգործական կազմակերպությունների կամ պետության կողմից ստանալ նպաստներ: Իհարկե, երկար թղթաբանությունից խուսափելու համար կարելի է պարզապես մուտք գործել համացանց և փնտրել ավելի մատչելի տարբերակներ, ինչպիսիք են՝ առցանց ուսուցման ծրագրերը և բավականին լավ տարբերակները նրանց համար, ովքեր չունեն ժամանակ և ֆինանսական ռեսուրսներ, սակայն ունեն ձգտում՝ շարունակելու ներդրումներ կատարել իրենց կրթական որակը բարձրացնելու համար:

Առցանց ուսուցման դասընթացները և ծրագրերը հակված են տրամադրելու ուսուցման ավելի մատչելի տարբերակներ, քան ավանդական կրթական ծրագրերը: Համաձայն Best Value Schools կայքի 2017թ-ի տվյալների՝ ավանդական բուհերում կամ քոլեջներում ուսումնական ամբողջ ծրագիրն ընդհանուր առմամբ կազմում է 85,000 ԱՄՆ դոլար: Մյուս կողմից՝ առցանց ուսումնական ամբողջական ծրագիրը կազմում է 30,000 ԱՄՆ դոլար[8]: Դա նշանակում է, որ վերջինս հնարավորություն է ընձեռում ուսանողներին խնայել ուսման վարձերի կեսից ավելին: Միևնույն ժամանակ ավանդական կրթությունը, ի տարբերություն առցանցի, կարող է լինել բավականին թանկ, բայց սոցիալիզացիայի կոնցեպտի տեսանկյունից՝ լինել անհամեմատ ավելի արդյունավետ և մարդակենտրոն:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ բախվում ենք աշխարհի առաջատար ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված ուսանողական առցանց ծրագրերի, որոնք ավելի մատչելի են, քան ավանդական ուսուցման տարբերակները: Այս կոնտեքստում ամենևին էլ զարմանալի չէ, որ օրինակ «DuoLingo-ի միջոցով օտար լեզուներ սովորող մարդկանց թիվն ավելի շատ է, քան ԱՄՆ բոլոր հանրային դպրոցները միասին վերցրած», - ասում է լեզվի անվճար ուսուցման ծրագրի հիմնադիր Լուիս Ֆոն Ահնը[9]: Շատ դեպքերում հնարավոր է հանդիպել նաև առցանց ուսուցման ամբողջությամբ անվճար ծրագրեր, սակայն այս դեպքում ռիսկի գործոնն անհամեմատ մեծ է, քանի որ այն կարող է թակարդ հանդիսանալ անձնական տվյալների շորթման և անօրինական օգտագործման համար: Իհարկե, սա լուրջ փաստարկ է, ուստի անհրաժեշտ է ժամանակ տրամադրել՝ հասկանալու այն ընկերությունների գաղտնիության քաղաքականությունը, որոնց ուսանողները պատրաստվում են տրամադրել իրենց անձնական տվյալները[10]:

*Վերը շարադրվածից հասկանալի է դառնում, որ թե՛ առցանց, թե՛ ավանդական ուսուցման ծրագրերից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և թերությունները, որը դժվարացնում է միանշանակ հավանություն տալ այս կամ այն ձևին: Ուստի կա երկու աշխարհներից լավագույնը ստանալու միջոց՝ այսպես կոչված «խառը» կամ **«հիբրիդային» ուսուցումը,** որը բավականին մեծ հայտնիություն է ձեռք բերել վերջին շրջանում: Այս ձևաչափը ենթադրում է իրականացնել ինչպես ավանդական, անհատական ուսուցումը, այնպես էլ առցանց դասընթացները: Դրա իրականացումը կարող է շատ տարբեր լինել՝ կախված թեմայից և դասախոսից: Յուրաքանչյուր ուսանող տարբեր կերպ է ընկալում մատուցվող նոր նյութը, ունի ուժեղ և թույլ կողմեր, և վերջապես սոցիալիզացվում է տարբեր ընտանիքներում: Չնայած ստեղծված հավասար պայմաններին կամ նույնիսկ գերազանց կարողություններին՝ ավանդական ձևաչափով ուսուցում ստացող երիտասարդների մի մասը ցուցաբերում է վատ արդյունքներ: Սա մի կողմից անհանգստացնում է ուսուցիչներին, մյուս կողմից՝ հիասթափեցնում ուսանողներին, սակայն մեծ լսարաններում, ծանրաբեռնված ուսումնական ծրագրերում և սահմանափակ ժամանակում հնարավոր չէ շատ բան շտկել: Հիբրիդային ձևաչափը թույլ է տալիս ուսուցիչներին՝ ազատություն տալ յուրաքանչյուր աշակերտի՝ առանց ժամանակ կամ նյութ վատնելու: Ուսանողները կարող են ազատ լինել մեկ թեմայի շրջանակներում, մինչև տիրապետեն նյութին և անհատականացնեն իրենց կրթությունը: Արդյունքում՝ ուսանողները կարող են ավելի շատ աշխատել, ունենալ բովանդակային ավելի հստակ պատկերացում և դասերին պատշաճ ներկայանալ:*

Այլ խոսքով՝ հիբրիդային ձևաչափը ուսուցչի համար հեշտ և արդյունավետ միջոց է՝ կոտրելու կրթության ստանդարտ մոտեցումը և անհատական մոտեցում ցուցաբերելու յուրաքանչյուր ուսանողի հանդեպ[11]:

Սոցիալիզացիայի ձևերի քննարկման մյուս խոշոր խնդիրը կապված է դեռահասների ինտեգրացիայի վտանգի հետ: Վերջին տարիներին «առցանց ավազակների» ազդեցությունը դեռահասների վրա դարձել է ծնողների համար բավական լուրջ խնդիր: Դեռահասները հասարակության ամենախոցելի խավն են, քանի որ նրանք ավելի մոտիվացված են՝ անդամագրվելու առցանց համայնքներին՝ առանց բավականաչափ հասունության իրենց պաշտպանելու համար: Դա պատանիների կյանքում առաջացնում է տհաճ իրավիճակներ, որոնք կարող են երկարատև ազդեցություն ունենալ: Այս համատեքստում առցանց սոցիալիզացիան դիտվում է որպես սպառնալիքի աղբյուր, քանի որ այն թույլ է տալիս ավազակներին ստանալ խոցելի պատանիների վստահությունը:

Բացի դրանից, երեխաների առցանց հաղորդակցումը վերահսկելը շատ ծնողների համար հեշտ գործ չէ, քանի որ երիտասարդները կապ են հաստատում իրենց առցանց ընկերների հետ օրվա ցանկացած պահին: Ի հակադրություն դրան՝ դեմ առ դեմ

սոցիալիզացիան վտանգ չի սպառնում անչափահասներին, քանի որ տեսանելի է և սահմանափակ՝ աշխարհագրական տարածքի առումով: Հետևաբար, ծնողները հեշտությամբ են վերահսկում իրենց երեխաներին, քանի որ դեմքով ճանաչում են իրենց երեխայի շրջապատը և գիտեն, թե որտեղ, երբ և ինչպես են միասին ժամանակ անցկացնում[12]:

Համեմատության մյուս հիմնական կետն առցանց սոցիալիզացիայի աշխարհագրական տարածքն է: Հնարավոր է ասել, որ առցանց սոցիալիզացիայի համար գրեթե չկան աշխարհագրական տարածքի սահմանափակումներ: Էլեկտրոնային արագությամբ այն անցնում է սահմանների, օվկիանոսների և մայրցամաքների վրայով: Այնուամենայնիվ, այս անսահմանափակ աշխարհագրական մուտքն ունի ինչպես իր առավելությունները, այնպես էլ թերությունները: Չնայած այն օգնում է մարդկանց ավելի շատ տեղեկատվություն համակարգել համայնքային մակարդակի խնդիրների լուծման համար, այն նաև թույլ է տալիս տարածել կեղծ և ոչ հավաստի տեղեկատվություն:

Կախված տարբեր հանգամանքներից և շարունակ գոյացող մարտահրավերներից՝ մարդկանց որոշակի զանգված, հատկապես՝ մեծահասակները, ապրում են միայնակ, որը դժվարացնում է արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը: Արդի ժամանակներում չափահաս մարդն անհատական սոցիալական կապը լրացնում է սոցիալական ցանցերի և այլ առցանց տեխնոլոգիաների շնորհիվ: Հետազոտությունների համաձայն, ինտերնետ օգտատերերն առաջատար սոցիալական ցանցերում, հատկապես՝ Facebook-ում, YouTube-ում, Messenger-ում, Instagram-ում, Twitter-ում, Skype-ում և այլ էլեկտրոնային հաղորդակցման հարթակներում[13] օրական միջինն անցկացնում են 2 ժամ 22 րոպե[14]: Բայց արդյո՞ք հաղորդակցման այս ձևն արդյունավետ է անհատի սոցիալական կարիքները բավարարելու համար:

Ոլորտի փորձագետները նշում են, որ այն կարող է լինել մի կողմից՝ մարդկային փոխազդեցության ավանդական միջոցների կողքին բարեհաջող հավելում և հեշտացնել աշխարհի հետ կապը՝ հաղթահարելով ժամանակի ու տարածության արգելքները: Առցանց սոցիալական կապն ապահովում է հարաբերությունների շարունակականությունը, հաճախակի փոխազդեցությունները, որոնք հասանելի չէին այն ժամանակներում, երբ նամակները կամ հեռավոր հեռախոսազանգերը միակ միջոցներն էին կապի պահպանման համար: Մյուս կողմից՝ էլեկտրոնային հաղորդակցման տեխնոլոգիաներն ամբողջությամբ չեն կարող փոխարինել անհատական այցելություններին կամ ընկերների շրջապատում անցկացրած իմաստալից ժամանակին[15]:

Ինտերնետի առաջ գալուց դեռևս մի քանի տասնամյակ առաջ կանադացի փիլիսոփա Մարշալ Մաքլուանն արդեն կանխատեսել էր նրա ժողովրդականությունը: Նա առաջինն էր, ով իդեալականացրեց էլեկտրոնային մեդիայի պատկերը և տեղեկատվության ստացման և կլանման օրինակով ձևակերպեց անհատի քաղաքակրթության զարգացման սեփական մոդելը:

Նա կարծում էր, որ մշակույթը և պրոգրեսն անխզելիորեն կապված են միմյանց հետ և հետապնդում են նույն նպատակը՝ մարդկության զարգացումը և էվոլյուցիան, սակայն տարբեր ճանապարհներով: Նա անցյալի և ներկայի պրիզմայի ներքո ուսումնասիրել է մարդկանց ընկալումները տեխնիկական և մշակութային առաջընթացի մասին: Մարդկային քաղաքակրթության պատմությունը՝ ըստ Մաքլուանի բաժանվում է[16]:

- *Նախապատմական հասարակություն և նախագրավոր մշակույթ: Դա ընդգրկում է ցեղային համակարգը, ուղղակի հաղորդակցությունը միայն սեփական ցեղի և ցեղակիցներին շրջապատող թեմաների շուրջ:*
- *Գրավոր մշակույթ. քաղաքակիրթ հասարակության, ազգայնականության և ինդիվիդուալիզմի ձևավորում, արդյունաբերական հեղափոխություններ:*

- *Արդիականություն. էլեկտրոնային հասարակության դարաշրջան, որտեղ տեղեկատվության փոխանցման արագության շնորհիվ և տեսակետների բազմազանությունից սպառողների մոտ ձևավորվում է աշխարհի բազմակողմանի ընկալում:*

Մաքլուանն առաջինն էր, ով կանխատեսեց տպագիր ՁԼՄ-ների և հեռուստատեսության անկումը: Այս գաղափարը նա արդարացրեց այն փաստով, որ մինչ այդ բազմությունը լսում էր միայն նախորդ դարաշրջանի «մահացած» ներկայացուցիչների ձայնը: Գոյություն չուներ ընթերցող-հեղինակ հետադարձ կապը, չկային բանավեճեր և քննարկումներ: Այլ կերպ ասած՝ չկար պահանջարկ. բոլորը, ստանում էին նույն տեղեկատվությունը, անկախ այն բանից՝ կիսում էին նույն կարծիքը՝ թե ոչ:

Հեռուստատեսության և տպագիր հրատարակությունների «վիզուալ մշակույթը», որում անհատը ստացված ինֆորմացիայի հենքով կատարում էր իր սեփական, անկախ վերլուծությունը կամ, ընդհակառակը, իրադարձությունների և կարծիքների բազմազանության համատեքստում նկատվում էր նրա կախվածությունը տվյալ տեսակետից, փոխարինվեց «Համաշխարհային գյուղ» հայեցակարգով: Մաքլուանը նշում էր, որ բնակչությունը ներդաշնակորեն ներգրավված է այդ գյուղում՝ անկախ նրանից, ուզում են դա, թե՝ ոչ, և անվանում էր նրանց «ինֆորմացիա ստացող գերիներ» [17]:

Հասարակության համար «Համաշխարհային գյուղը»-ը սոցիալական կազմակերպության մի տարատեսակ է, ուր տրամաբանորեն նեղանում է ամբողջ աշխարհը՝ նմանվելով փոքրիկ գյուղի, որտեղ բոլորը ծանոթ են միմյանց, արագ փոխանակում են տեղեկատվություն և կրպակներում լսած լուրերի բեկորներից ձևավորում իրենց սեփական կարծիքը: Տվյալ կազմակերպության ներսում անհատը, կարծես, տեղափոխված լինի ցեղային հասարակարգ՝ մի տարբերությամբ, որ այստեղ նա ավելի տեղեկացված է:

Բավականին երկար ժամանակ և ռեսուրսներ են պահանջվել վերը նշված տեսակետի ուսումնասիրության և զարգացման համար: Մաքլուանը համացանցը՝ որպես սոցիալիզացնող մեխանիզմ, դասում էր բոլոր այն գյուտերի շարքին, որոնք արմատապես փոխել են քաղաքակրթությունը, ինչպիսիք էին՝ հագուստը, անիվը, մեքենան և այլն:

Ցավալի է այն հանգամանքը, որ ապագայում սերունդների կախվածությունը համացանցից, զանգվածային տեղեկատվական միջոցներից, ինովացիոն տեխնոլոգիաներից, ավելի նկատելի է լինելու, քան՝ ներկայիս սերունդներինը: Բայց քանի որ տեխնոլոգիաները մշտապես գտնվում են զարգացման փուլում, անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն և ինչ նորմեր պետք է կանոնակարգվեն, որպեսզի արդյունքում ունենանք սոցիալիզացիոն արդյունավետ մեխանիզմ՝ երջանիկ քաղաքացու տեսլականով: Ընդհանուր առմամբ, մի բան հստակ է՝ ***պետք է սովորել վերահսկել տեխնոլոգիաները և թույլ չտալ, որ այն վերահսկի մեզ:***

Ներկայումս դեմ առ դեմ և առցանց սոցիալիզացիայի տիպերը հանդիսանում են արդի սոցիալիզացիոն գործընթացի զանգվածային դրսևորման երկու հիմնական տարբերակները:

Չնայած սոցիալիզացիայի այս երկու ձևերը հետապնդում են միևնույն նպատակները, նրանց միջև գոյություն ունեն նկատելի տարբերություններ՝ կապված իրական փորձի մատակարարման, կրթական գործընթացների իրականացման, դեռահասների նկատմամբ սպառնալիքի և սոցիալիզացիայի աշխարհագրական տարածքի մակարդակով:

Դեմ առ դեմ հաղորդակցվելիս մենք դիմում ենք խոսքի, մարմնի լեզվի, դեմախաղերի օգնությանը, որն իրական աշխարհի հետ բավական խոր անհատական կապ ունի: Մյուս կողմից՝ առցանց սոցիալիզացիան հիմնված է տեխնոլոգիական առաջընթացի, հաղորդակցության կոնկրետ մեթոդների վրա, որոնք հանդես են գալիս գրավոր

կամ ձայնային տեսքով: Այն հեղափոխական բնույթ ունի, քանի որ վերացնում է ավանդական սոցիալիզացիային բնորոշ բազմաթիվ սահմանափակումներ, ինչը հասարակության համար առաջացրել է նոր հնարավորություններ և նոր մտահոգություններ:

Անհերքելի փաստ է այլևս, որ նոր տեխնոլոգիաների առկայությունը փոխել է մեր ապրելակերպը, համագործակցության ձևաչափերը, բայց դա չի նշանակում, որ մենք կորցրել ենք հաղորդակցության, տեղեկատվության կամ ժամանցի որոնման ավանդական ուղիները: ***Տեխնոլոգիաները ստեղծում են միայն կապեր, մնացածը դեռ «մեր ձեռքերում է»:*** *Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ սոցիալիզացիայի այս երկու դրսևորումներն ունեն և՛ առավելություններ, և՛ թերություններ, ինչի մասին խոսվեց արդեն: Ուստի կարծում եմ, երկուսից էլ պետք է վերցնել լավագույն կողմերը, ձևավորել «հիբրիդային» մոդել և հրամցնել հասարակությանը՝ դրանում մասնակից դարձնելով հասարակական-քաղաքական ինստիտուտներին և կրթական-դաստիարակչական հաստատություններին: Արդյունքում կունենանք արդյունավետ ավանդական սոցիալիզացիոն համակարգ՝ համեմված ինովացիոն տեխնոլոգիաներով, որից կշահեն և՛ Homo sapiens-ը, և՛ Homo interneticus-ը:*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «IS ATTENDING COLLEGE ONLINE CHEAPER THAN ATTENDING A TRADITIONAL COLLEGE?». **URL:** https://www.bestvalueschools.com/faq/is-attending-college-online-cheaper-than-attending-a-traditional-college/
2. «Can I successfully learn a language online?». **URL** https://www.theguardian.com/education/2014/feb/21/can-i-learn-a-language-online
3. **«How Safe Is Your Personal Information Online?». URL:** https://www.lifeeducation.org.au/parents/how-safe-is-your-personal-information-online
4. **Claire Johnson.** «Blended learning: What is it and why should you try it?». 2018. **URL:** https://blog.labster.com/what-is-blended-learning
5. «face-to-face-versus-online-socialization» **URL:** https://studymoose.com/face-to-face-versus-online-socialization-essay
6. **Irfan Ahmad.** «The Most Popular Social Media Platforms of 2019». 2019. **URL:** https://www.digitalinformationworld.com/2019/01/most-popular-global-social-networks-apps-infographic.html
7. **Saima Salim.** «How much time do you spend on social media? Research says 142 minutes per day». 2019. **URL:** https://www.digitalinformationworld.com/2019/01/how-much-time-do-people-spend-social-media-infographic.html
8. **JANNA ANDERSON AND LEE RAINIE.** «Hopes for the future of the digital life». 2018. **URL:** http://www.pewinternet.org/2018/04/17/hopes-for-the-future-of-the-digital-life/
9. **Glenn G. Sparks.** «Media Effects Research: A Basic Overview». 2001. p. 324 **URL:** https://mcluhangalaxy.wordpress.com/2015/06/09/the-3-eras-of-communication-according-to-mcluhan-innis/
10. **«global-village-definition-the-basics ». URL:** https://www.thoughtco.com/global-village-definition-the-basics-4155356
11. **Online Discussion** «Online socializing vs. face to face». 2010 **URL**: http://www.sciforums.com/threads/online-socializing-vs-face-to-face.98681/ (ուսումնասիրվել է 12.02.2019)
12. «face-to-face-versus-online-socialization» **URL:** https://studymoose.com/face-to-face-versus-online-socialization-essay (ուսումնասիրվել է 12.02.2019)

13. **Quora Online Discussion** «Nowadays, More People are Choosing to Socialize Online Rather than Face to Face. Is this a Positive or Negative Development?» 2018. **URL:** https://www.quora.com/Nowadays-more people-are-choosing-to-socialize-online-rather-than-face-to-face-Is-this-a-positive-or-negative-development
14. **«Is Online Learning as Good as Face to Face Learning?» URL:** https://www.easy-lms.com/knowledge-center/lms-knowledge-center/is-online-learning-as-good-as-face-to-face-learning/item12527
15. **Marian Stoltz-Loike** «4 Reasons Online Learning Works Well for Working Adults». 2017. **URL:** https://www.usnews.com/education/online-learning-lessons/articles/2017-02-10/4-reasons-online-learning-works-well-for-working-adults
16. **«The Benefits of Online Ed for Disabled Students». URL:** https://www.onlineuniversities.com/articles/students/the-benefits-of-online-ed-for-disabled-students/
17. **Плешаков В. А**. К вопросу об определении понятия «социализирующая среда» в социальной педагогике // Актуальные проблемы профессионально-педагогического образо- вания: Межвузовский сборник научных трудов. Вып. 4. / под ред. Е. А. Левановой. Калинин- град: Балт. ин-т экономики и финансов, 2000, стр. 107–109.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ավանդական սոցիալիզացիա vs առցանց սոցիալիզացիա. արդի մարտահրավերներ

Հասմիկ Շափաղաթյան

Սոցիալական մեդիայի առաջարկած հնարավորություններն այսօր ամբողջ աշխարհում մարդկանց թույլ են տալիս ստանալ հսկայական քանակությամբ տեղեկատվություն ցանկացած պահի ցանկացած թեմայի շրջանակներում՝ այստեղ և հենց հիմա, գտնել նմանատիպ հետաքրքրություններ ունեցող մարդկանց, նրանց հետ քննարկել տարաբնույթ հարցեր և ինչ-որ չափով այդ տեղեկատվությունը մատչելի դարձնել հաջորդ սերունդների համար, անգամ անցկացնել ընտրություններ (2009թ-ին Բարաք Օբաման դարձավ համացանցի միջոցով ընտրված առաջին նախագահը):

Առօրյա կյանքում ավելի ու ավելի շատացող սթրեսները ժամանակակից մարդուն տանում են կիբեռմիջավայր, որտեղ չկա պատասխանատվություն, ամեն բան վիրտուալ է և ենթակա ճշգրտումների, չկան պահող և զսպող գործոններ շփման ընթացքում, մարդը կարող է լինել այն, ինչ ուզում է, այլ ոչ թե այն, ինչ կա իրականում, ունի հնարավորություն ամբողջությամբ իրականացնելու իր ցանկությունները, արդարացնելու իր հույսերը և այլն:

Այս հարցերն են, որ առաջ են քաշում նոր մարտահրավերներ՝ ի վերջո հասկանալու, թե ինչ հարաբերությունների մեջ պիտի լինեն ավանդական և առցանց սոցիալիզացիոն համակարգերը՝ ձևավորելու պատասխանատու և գիտակից քաղաքացի:

РЕЗЮМЕ

Традиционная социализация VS онлайн социализации: современные вызовы

Асмик Шапагатян

Ключевые слова: Социализация, онлайн-социализация, лицом к лицу социализация, коммуникационные технологии, визуальная культура, инновационная система, гибридная модель, географическая зона социализации, онлайн-бандит.

Возможности, предлагаемые социальными сетями сегодня, позволяют людям во всем мире получать огромное количество информации по любой теме в любое время, здесь и сейчас, находить людей со схожими интересами, обсуждать с ними различные вопросы,

предоставлять некоторую информацию будущим поколениям, даже проводить выборы (в 2009 году Барак Обама стал первым президентом, избранным через Интернет).

Все чаще стрессы повседневной жизни уводят современного человека в киберсреду, где нет ответственности, все виртуально, не подлежит корректировкам, нет сдерживающих факторов при общении, человек может быть тем, кем хочет, а не тем, кем является. На самом деле у него есть возможность полностью реализовать свои желания, оправдать свои надежды и так далее.

Это вопросы, которые ставят новые задачи для окончательного понимания взаимосвязи между традиционными и онлайн-системами социализации и формировании ответственного, сознательного гражданина.

SUMMARY

Traditional Socialization VS Online Socialization: Contemporary Challenges

Hasmik Shapaghatyan

Keywords: Socialization, online socialization, face-to-face socialization, communication technology, visual culture, innovation system, hybrid model, geographical area of socialization, online bandit.

The opportunities offered by social media today allow people all over the world to get a huge amount of information on any topic at any time: right here and right now; to find people with similar interests, discuss various issues with them and make that information in some extent available to future generations, even to hold elections (in 2009 Barack Obama became the first president elected via the Internet).

Increasingly, the stresses of everyday life lead modern man into a cyber environment where there is no responsibility, everything is virtual, not subject to adjustments, there are no restraining factors when communicating, a person can be who he wants, and not who he is. In fact, he has the opportunity to fully realize his desires, justify his hopes, and so on.

These are the questions that pose new challenges and help in absolute understanding the kind of relationships between traditional and online socialization systems in order to form a responsible, conscious citizen.